ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանարիկա Մ. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկաթի դարի մշակույթում. Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.) 8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բաղալյան

ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները ԱՄԴԽՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.) 20

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի) 43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.) 66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.) 78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասատրյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաազգագրական ակնարկ) 104

Լիլիա Ավանեսյան

Մ. Դ. Իսաևի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.) 124

Միհիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում (առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն) 138

Ասպոիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.) 150

Քաքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.) 173

Համլիկ Պետրոսյան
Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզաննա Ծատուրյան
Չարենցի հուշասրահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան
Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմածառի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան
Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան
Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 263

DOI:10.56653//18290361-2023.11-252

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ . ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՇՏԵՄԱՐԱՆԸ

Հայաստանի Հանրապետության խոշոր մշակութային օջախներից է Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը: Իր ավելի քան հարյուրամյա պատմության ընթացքում թանգարանը դարձել է հայ գրականության, թատերարվեստի, կինոարվեստի և երաժշտարվեստի անվանի գործիչների, ինչպես նաև մշակութային կառույցների, կրթական հաստատությունների արխիվային նյութերի հանգրվանը:

Թանգարանի պատմությունը սկիզբ է առնում 1921 թվականից, երբ Հայկական ՍՍՌ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծվում է Պետական կուլտուր-պատմական թանգարանի պատմագրական բաժինը, որն ըստ էության սկսել է գործել գրականագետ, պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ Երվանդ Շահազիզի ջանքերով. վերջինս Նոր Նախիջևանից Երևան էր բերել և թանգարանին հանձնել Միքայել Նալբանդյանի, Գաբրիել Պատկանյանի, Ռափայել Պատկանյանի, Սմբատ Շահազիզի արխիվները, Նոր Նախիջևանի հայ գաղութի պատմությանը վերաբերող վավերագրեր, հնատիպ գրքեր և այլ նյութեր: Մինչ այդ (1921 թ. հոկտեմբերին), Հովհաննես Թումանյանի միջոցով, թանգարանին էր հանձնվել Սայաթ-Նովայի երգերի ինքնագիր տետրը՝ Դավթարը, որը յուրահատուկ կերպով կամրջեց երկու մեծերին՝ թանգարանի համար կրկնակի արժեք ստանալով: Դավթարի հետ թանգարան է հասել նաև ամենայն հայոց բանաստեղծի նամակը, որով նա համառոտ նկարագրում է երգարանի՝ իր մոտ հասնելու ճանապարհը, ապա այն հանձնում թանգարանին (ՈՒՂԵՑՈՒՅՑ 2009):

Հետագա տարիներին Կուլտուր-պատմական թանգարանի պատմագրական բաժինը համալրվեց գրական-մշակութային գործիչների, դասական գրողների՝ Խաչատուր Աբովյան, Հովհաննես Թումանյան, Պետրոս Ադամյան, Գրիգոր Արծրունի, Կոմիտաս, Մուրացան, Նար-Դոս, Ալեքսանդր Շիրվանզադե, Սիրանույշ, Գաբրիել Սունդուկյան, մշակութային տարբեր հաստատությունների բազմաթիվ արխիվային նյութերով, որի արդյունքում 1935 թ. գրական բաժինը առանձնացվում է որպես ինքուրույն գիտական հիմնարկ՝ Պետական գրական թանգարան անունով (ՈՒՂԵՑՈՒՅՑ 1962):

Մինչ թանգարանի վերջնական կազմավորումը, այն տարբեր տարիներին եղել է ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի, ապա՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի կազմում՝ իբրև Լեզվի ու գրականության ինստիտուտի, այնուհետև՝ Գրականության ինստիտուտի մի ինքնուրույն բաժին: Գրականության և արվեստի թանգարանը, որպես առանձին մշակութային

կառույց իր վերջնական անկախացումը ձեռք բերեց 1954 թվականին՝ Գրական, Թատերական թանգարանների և Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական կաբինետի ֆոնդերի միավորմամբ. Ընդ որում Երևանի թատերական թանգարանը հիմնվել էր 1935 թ.՝ թատերագետ Սարգիս Մելիքսեթյանի ջանքերով, իսկ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական կաբինետը՝ 1934 թ.՝ Երևանի կոնսերվատորիայում երաժշտական մի շարք ֆոնդերի ընդգրկմամբ: 1977 թվականից Գրականության և արվեստի թանգարանը ամբողջացվեց նաև հայ կինոարվեստին վերաբերող նյութերով (ՈՒՂԵՑՈՒՅՑ 2009):

1967 թվականից թանգարանը կրում է Եղիշե Չարենցի անունը:

Հիմնադրումից ի վեր, թանգարանի ամենակարևոր գործառույթներից է եղել համալրման աշխատանքը. ավելին՝ խորհրդային շրջանում թանգարանն ունեցել է առանձին հավաքչական բաժին: Չնայած բաժինն արդեն երկար տարիներ է, ինչ գոյություն չունի, բայց տարիների ընթացքում ձևավորված ավանդույթը անխախտ պահելով՝ այն շարունակվում է առ այսօր: Հպարտությամբ կարող ենք նշել, որ թանգարանում պահվող նյութերի քանակն արդեն հատել է մեկ միլիոնի շեմը:

18-րդ դարից մինչև մեր օրերի հայ գրականության ողջ աստղաբույլն է հանգրվանել թանգարանի գրական ֆոնդերում, որն ամենահարուստ բաժինն է՝ 565 ֆոնդեր ու հավաքածուներ՝ Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց, Գուրգեն Մահարի, Ավետիք Իսահակյան, Ղազարոս Աղայան, Ռափայել Պատկանյան, Միքայել Նալբանդյան, Խաչատուր Աբովյան, Ռաֆֆի, Ակսել Բակունց, Պերճ Պռոշյան, Դերենիկ Դեմիրճյան, Վահան Թոթովենց, Լեո Կամսար, Մուրացան, Ալեքսանդր Շիրվանզադե, Գաբրիել Սունդուկյան, Լևոն Շանթ, արևմտահայ գրողներ Հակոբ Պարոնյան, Պետրոս Դուրյան, Միսաք Մեծարենց, Դանիել Վարուժան, Գրիգոր Զոհրապ, Ռուբեն Սևակ, Սիամանթո, Երվանդ Օտյան, Զապել Եսայան, սփյուռքահայ գրողներ Վիլյամ Սարոյան, Հակոբ Օշական, Համաստեղ, Վազգեն Շուշանյան…: Այստեղ են պահվում մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ինքնագիրը, Եղիշե Չարենցի ձեռագրերն ու այն գործերը, որոնք երկար տարիներ թաղված են եղել հողի տակ, Հովհաննես Թումանյանի ձեռագրերն ու նամակները, Միսաք Մեծարենցի՝ մոր նվիրած մատանին, որի վրա բանաստեղծը փորագրել է տվել՝ «Կատարեալ սէր մերժէ զերկիւղ», Ռաֆֆու «Ձայն տուր, ո՛վ ծովակ», բանաստեղծության ինքնագիրը, Գաբրիել Սունդուկյանի կահույքից նմուշներ, Ալեքսանդր Շիրվանզադեի գրասեղանը, Սիամանթոյի գրիչը, Վահան Տերյանի լուսանկարչական ապարատը և այլ բացառիկ նմուշներ: Երկար տարիներ թանգարանում էին պահվում նաև վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրյանի գանգոսկրերի բեկորները, որոնց հիման վրա մարդաբան Անդրանիկ Ճաղարյանը վերականգնել է նրա դիմապատկերը: 2012 թ. այդ մասունքները ամփոփվեցին Կոմիտասի անվան պանթեոնում:

Հատկանշական է, որ հեղինակներից շատերը իրենց կենդանության օրոք թանգարանին են հանձնել իրենց կյանքին ու ստեղծագործական ուղուն վերաբերող փաստաթղթեր, լուսանկարներ, ձեռագրեր, որոնց հիման վրա էլ կազմավորվել են անհատական ֆոնդեր:

Հայ-ֆրանսիական մշակութային բարեկամության կարևորագույն վկայությունն է թանգարանի ամենահարուստ հավաքածուներից մեկը՝ Արշակ Չոպանյանի ֆոնդը՝ շուրջ 60.000 նյութով: Այստեղ տեղ են գտել հայերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով գրքեր, մամուլ, հոդվածներ, գրական ստեղծագործություններ, իր գրած ու հատկապես ստացած պատասխան նամակներ այնպիսի անվանի մտավորականներից, ինչպիսիք են Է. Զոլան, Պ. Էլյուարը, Ա. Մեյեն, Ռ. Ռոլանը, Ֆ. Վերֆելը և ուրիշներ:

Գրական ֆոնդերի հուշային բաժնում իրենց արժանի տեղ են գտել հայ մեծանուն նկարիչներ Գևորգ Բաշինջաղյանի, Փանոս Թերլեմեզյանի, Եղիշե Թադևոսյանի, Վարդգես Սուրենյանցի, Հակոբ Գյուրջյանի, Հրաչյա Ռուխկյանի, Երվանդ Քոչարի նաև այլ արվեստագետների գործեր, որոնք պատկերում են ժամանակի գրողներին ու գրական կյանքը: Բացառիկ գեղանկարչական աշխատանք է գերմանացի նկարիչ Ֆրիդրիխ Լյուդվիգ ֆոն Մայդելի՝ Խաչատուր Աբովյանի դիմանկարը՝ ստեղծված Դորպատում 1830 թ., որը բացի իր գեղարվեստական արժեքից, գրողի՝ մեզ հասած միակ վավերական, հավաստի պատկերն է: Այն արվել է մեծ լուսավորչի՝ Դորպատում ուսանելու տարիներին: Արժանահիշատակ է նաև մեծահանճար նկարիչ Մարտիրոս Սարյանի՝ Եղիշե Չարենցի դիմանկարը /1923թ./, որն այսօր դարձել է թանգարանի յուրօրինակ խորհրդանիշը և զարդարում է մշտական ցուցադրությունը:

Գրական ֆոնդերը կառուցվածքով բաժանվում են երկու հիմնական ենթաբաժնի՝ ձեռագրական ֆոնդ, որտեղ տեղ է գտել գրական վերոնշյալ, նաև այլ երևելիների հարուստ ձեռագրային հավաքածուն և գրական-հուշային իրերի ֆոնդ, որտեղ պահպանվում են կերպարվեստի գործեր, լուսանկարներ, անձնական իրեր, տպագիր հուշային նյութեր, դրոշմանիշներ, բացիկներ և այլն:

Գրական ֆոնդում իրենց հանգրվանն են գտել նաև հայ և օտարազգի անվանի հայագետների արխիվները՝ Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Ստեփան Մալխասյան, Անտուան Մեյե:

Գրական ու մշակութային գործիչների անհատական ֆոնդերից զատ թանգարանում պահպանվում են կրթական ու մշակութային հաստատությունների ֆոնդեր, այդ թվում՝ Լազարյան ճեմարանի, Մխիթարյան միաբանության, Ներսիսյան դպրոցի, Սանասարյան վարժարանի և այլ կրթօջախների:

Թանգարանի թատերական ֆոնդն իր մեծությամբ երկրորդն է՝ գրականից հետո: Այն ընդգրկում է հայ թատերական արվեստի նշանավոր դերասաններին, թատերախմբերին, թատրոններին և արվեստի հիմնարկներին վերաբերող 395 ֆոնդ ու հավաքածու, որոնք շարունակվում են համալրվել նաև այսօր:

Հայ պրոֆեսիոնալ թատրոնի ձևավորման և զարգացման ընթացքը ներկայացված են թատերական ֆոնդում պահպանվող Կ. Պոլսում 1846-ին Հովհաննես Գասպարյանի ջանքերով հիմնադրված հայկական առաջին թատրոն-կրկեսի՝ «Արամյան թատրոնի», ապա 1861 թ. դարձյալ Կ. Պոլսում հիմնադրված առաջին դրամատիկական արհեստավարժ թատրոնի՝ «Արևելյան թատրոնի», որտեղ նաև իրենց անզուգական խաղով փայլել են այդ թատրոններում հանդես եկած Արուսյակ Փափազյանի, Մարտիրոս Մնակյանի, Մարի Նվարդի, Ազնիվ Հրաչյայի,

Պետրոս Ադամյանի, Սիրանույշի և այլ (ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2010) շնորհալի դերասանների մասին պատմող հարուստ հավաքածուները:

Ամենահին հավաքածուներից է թատերագիր, բեմադրիչ, արևելահայ թատրոնի հիմնադիրներից Գևորգ Չմշկյանի ֆոնդը:

1863 թ. Թիֆլիսում կազմավորված «Հայոց թատրոն»-ում հանդես էր գալիս Գևորգ Չմշկյանն իր թատերախմբով՝ Միհրդատ Ամերիկյան, Սաթենիկ Չմշկյան, Սեդրակ Մանդինյան և այլք: Ավելի ուշ Թիֆլիսում բացվում են «Արտիստական ընկերության» թատրոնը և «Արաքսյան թատրոնը»: Վերջիններիս շուրջ համախմբվում են Արշակ Բուրջալյանը, Ստեփան Քափանակյանը, Մարի Բերոյանը, Պահարեն, Հասմիկը, Բաբկեն Ներսիսյանը և այլք: Նրանց անձնական իրերը, նամակները, նաև ներկայացումների ազդագրեր պահվում են թատերական ֆոնդում:

Հայաստանի Խորհրդային Հանրապետության հռչակումից հետո մեր երկրում մշակութային ու հատկապես թատերական կյանքը սկսել է մեծ վերելք ապրել, որի առաջ մղող ուժն է դառնում 1922 թ. բացված Հայաստանի Հանրապետության Առաջին պետական դրամատիկական թատրոնը. հետագայում կոչվել է Գաբրիել Սունդուկյանի անվան: Տարբեր տարիներին այնտեղ հանդես եկած անզուգական դերասաններ Սիրանույշի, Հովհաննես Աբելյանի, Վահրամ Փափազյանի, Արուս Ոսկանյանի, Գուրգեն Ջանիբեկյանի, Բաբկեն Ներսիսյանի, Մետաքսյա Սիմոնյանի, Արուս Ասրյանի, Միհեր Մկրտչյանի, Խորեն Աբրահամյանի, Սոս Սարգսյանի, Վարդուհի Վարդերեսյանի, տաղանդաշատ ռեժիսորներ Արմեն Գուլակյանի, Վարդան Աճեմյանի, Լևոն Քալանթարի և մյուս մեծերի անձնական ու բեմական լուսանկարները, պիեսները, հուշագրությունները ևս հանգրվանել են թանգարանի թատերական ֆոնդերում:

Ֆոնդին առանձնահատուկ հմայք են հաղորդում բեմական զգեստները՝ Վահրամ Փափազյանի՝ հանրահայտ «Օթելլոյի» զգեստը և «Լիր արքայի» վեհաշուք թիկնոցը, Պետրոս Ադամյանի անկրկնելի «Համլետի» հանդերձը, Մարի Բերոյանի բեմական նրբագույն զգեստը և այլն: Թատերական ֆոնդերում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում նաև զանազան ներկայացումների համար արված բեմի և բեմական հագուստների էսքիզները:

Հայ երաժշտության պատմությունն է ամբարվել թանգարանի երաժշտական ֆոնդերում: Այն ընդգրկում է 17-րդ դարից մինչև մեր օրերի անվանի կոմպոզիտորների, երաժշտագետների, խմբավարների, երաժիշտ-կատարողների անհատական հավաքածուներ, երաժշտական ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների և համույթների արխիվներ՝ 228 անուն ֆոնդ (ՈՒՂԵՑՈՒՅՑ 2016):

Մեծ արժեք են ներկայացնում նաև հայկական երաժշտարվեստին առնչվող ամենատարբեր հավաքածուները՝ նվագարանները, ձայնապնակները, համերգային ազդագրերն ու ծրագրերը, լուսանկարները, երգարանները և այլն:

Ֆոնդի ամենահին հավաքածուներից է հայկական օպերային արվեստի հիմնադիր Տիգրան Չուխաճյանի ֆոնդը, որտեղ պահվում են հայկական առաջին

օպերայի՝ «Արշակ Բ»-ի, «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» օպերետի և այլ ձեռագիր նոտաներ, հոդվածներ, ծրագրեր և այլն:

Հայ պրոֆեսիոնալ երաժշտության սկզբնավորման ու զարգացման շրջափուլերն են արտացոլում կոմպոզիտորներ Քրիստափոր Կարա-Մուրզայի, Մակար Եկմալյանի, Նիկողայոս Տիգրանյանի, Արմեն Տիգրանյանի, Ռոմանոս Մելիքյանի, Արամ Խաչատրյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Արտեմի Այվազյանի, երգչուհիներ Մարգարիտ Բաբայանի, Հայկանուշ Դանիելյանի, Գոհար Գասպարյանի, Թիֆլիսի Հայոց երաժշտական ընկերության, Հայաստանի էստրադային նվագախմբի և այլ երաժշտական հաստատությունների արխիվները:

Ուշադրության է արժանի երաժշտագետ, քամանչահար Սաշա Օգանեզաշվիլու ազգային նվագարանների հավաքածուն, որտեղ տեղ են գտել ինչպես հայկական, այնպես էլ արևելյան երաժշտական գործիքների տասնյակ նմուշներ: Օգանեզաշվիլիի հավաքածուից զատ թանգարանի երաժշտական ֆոնդը զարդարում են Կոմիտասի ֆիսհարմոնը, Սայաթ-Նովային վերագրվող քամանչան, Ջիվանու ջութակը, Շերամի թառը և այլն:

Թանգարանի երաժշտական ֆոնդի մեծարժեք հավաքածուներից է նաև երաժշտագետ Բարսեղ Կորգանովի (Ղորղանյան) ֆոնդը, որտեղ առկա են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի անվանի մշակութային ու հասարակական գործիչների վերաբերյալ տարաբնույթ նյութեր՝ ձեռագիր նամակներ, լուսանկարներ, հոդվածներ և այլն: Արժանահիշատակ է հատկապես մեծանուն կոմպոզիտոր Մոցարտի նամակը՝ գրված 1778 թ. Փարիզում, իր մոր մահվան օրը…

Բացառիկ են Լյուդովիկոս 14-րդի, պարսից Ֆաթալի շահի, Ալեքսանդր 1-ինի, Եկատերինա 2-րդի, Պավել 1-ինի և ռուս այլ գահակալների, զորավարների ինքնագիր նամակները, գրությունները, որոնք նույնպես տեղ են գտել Կորգանովի հավաքածուում:

Երաժշտական ֆոնդերում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հայ երաժշտարվեստի ռահվիրա Կոմիտասի արխիվը. այն ընդգրկում է ինքնագիր նոտային ձեռագրեր՝ հայկական և եվրոպական նոտագրությամբ, ժողովրդական երգերի մշակումներ, հոգևոր երգերի գրառումներ, անձնական փաստաթղթեր ու կենսագրությանն առնչվող նյութեր, լուսանկարներ, նամակներ, հոդվածներ, երաժշտական գործիքներ և այլն: Հավաքածուում իր ուրույն տեղն է գտել Կոմիտասի անձնական գրադարանը, որոնցում առկա են նոտաներ, մակագրված գրքեր, ամսագրեր և այլն, իսկ Վարդապետի շուրջառը, սրինգը, հուշանվեր կոշիկներ, դաշնամուրի ծածկոցը զարդարում են երաժշտական ցուցասրահը:

Երաժշտական ֆոնդերում են ժողովված նաև հայ աշուղական-գուսանական արվեստի ականավոր ներկայացուցիչների արխիվները, երաժշտական հաստատություններին առնչվող հավաքածուներ, ինչպես նաև հայ երաժշտության պատմությանը վերաբերող զանազան նյութեր:

Մշակութային զբոսանքի վերջին կանգառը հայ կինոարվեստին նվիրված հատվածն է: Կինոարվեստի ֆոնդերն ընդգրկում են 20-րդ դարասկզբից մինչև մեր օրերի հայկական կինոարվեստին և հայ կինոգործիչներին առնչվող 125 ֆոնդ և հավաքածու (ՈՒՂԵՑՈՒՅՑ 2018):

Մեծարժեք են հատկապես անվանի կինոռեժիսորներ Համո Բեկնազարյանի, Դանիել Դզնունու, Ամասի Մարտիրոսյանի, Հենրիկ Հովհաննիսյանի, Ֆրունզե Դովլաթյանի, Լևոն Իսահակյանի, Հենրիկ Մալյանի, Արման Մանարյանի, Լաերտ Վաղարշյանի, Ռուբեն Գևորգյանցի, Դմիտրի Կեսայանցի, մուլտիպլիկատորներ Լև Ատամանովի, Ստեփան Անդրանիկյանի, կինոօպերատորներ Սերգեյ Իսրայելյանի, Լևոն Աթոյանցի արխիվային նյութերը, որոնք ձևավորում են հայ կինեմատոգրաֆիայի յուրահատուկ գունապնակը:

Հատկապես մեծ թիվ են կազմում լուսանկարների, նեգատիվների, սցենարների, ազդագրերի, էսքիզների հավաքածուները, որոնք ուրվագծում են հայկական ֆիլմերի արտադրության պատմական ճանապարհը: Ֆոնդում առանձնահատուկ տեղ ունի կինոնկարահանման սարքավորումների հավաքածուն, որտեղ իր տեղն է գտել նաև «Դերբի» կինոխցիկը, որով նկարահանվել են հայկական առաջին համր ֆիլմերը:

2000-ական թվականների սկզբներից Գրականության և արվեստի թանգարանում կազմավորվեց նաև տեսա-ձայնադարանը, որտեղ կենտրոնացվեցին ֆոնդերում առկա ձայնային և տեսային նյութերը: Այստեղ պահվում են 1000-ից ավելի ձայներիզներ, ձայնասկավառակներ, կինոժապավեններ, տեսաժապավեններ և այլն:

Հատկապես արժեքավոր են Կոմիտասի և Արմենակ Շահմուրադյանի կատարումներով ձայնապնակները, անվանի դերասաններ Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի, Արուս Ոսկանյանի և այլոց ասմունքային ձայնագրությունները, խորհրդահայ նշանավոր գրողներ Դերենիկ Դեմիրճյանի, Պարույր Սևակի, Հովհաննես Շիրազի, Ավետիք Իսահակյանի և այլոց ելույթներն ու հարցազրույցները, հայ անվանի կոմպոզիտորների ստեղծագործություններ և այլն (ՈՒՂԵՑՈՒՅՑ 2009):

Գրականության և արվեստի թանգարանի հարուստ հավաքածուի կարևոր լրումն է թանգարանի ոչ պակաս հարուստ ու բազմաժանր գրադարանը: Այն, ըստ էության, կազմավորվել է թանգարանի հիմնադրմանը զուգահեռ, սակայն առաջին գրքային գրանցումը արվել է 1943 թվականին: Այստեղ են պահվում հայ մեծերի՝ տարբեր ֆոնդերի հետ թանգարան մուտք գործած անձնական գրադարանները, գրքերը՝ 100 .000 միավոր և պարբերական մամուլը՝ «Ազդարար», «Բազմավէպ», «Հանդէս ամսօրեա», «Մշակ», «Մուրճ», «Անահիտ», «Գեղունի», «Կավրոշ», «Բիւզանդիոն», «Նոր լուր», «Վերջին լուր» ...19–20-րդ դարերի արևմտահայ և արևելահայ պարբերական մամուլի, ինչպես նաև խորհրդահայ մամուլի մի մեծ ժառանգություն՝ ավելի քան 20 000 միավոր:

Ուշագրավ է, որ հայ դասականներից շատերի անձնական գրադարանները, որոնք նրանց ֆոնդերի հետ միասին տեղափոխվել են թանգարան և համալրել գրադարանային ֆոնդը: Հազարավոր հայալեզու և օտարալեզու գրքերով են հարուստ ֆրանսահայ գրող, հրապարակախոս, հասարական գործիչ Արշակ Չոպանյանի, բանաստեղծ, խմբագիր, հասարակական գործիչ Թորոս Ազատյանի, գրողներ Միքայել Նալբանդյանի, Ռափայել Պատկանյանի, Գաբրիել Սունդուկյանի, դերասան, ասմունքող Սուրեն Քոչարյանի, թատերագետ Լուիզա

Սամվելյանի և այլոց անձնական գրադարանները՝ շուրջ 29 հեղինակի գրքային անհատական ֆոնդ: Գրքերից շատերի վրա կարելի է տեսնել նաև հեղինակների ինքնագիր մակագրությունները, տարբեր ընծայագրեր, որոնք կարևոր աղբյուր են դառնում տվյալ գործչի կեսագործունեության կամ ստեղծագործական աշխատանոցի այս կամ այն փուլի ուսումնասիրման համար:

Գրադարանային ֆոնդի առանձին բաժին է հնատիպ գրքերի հավաքածուն՝ 500-ից ավելի արժեքավոր նմուշներով, որոնցում կան նաև եզակի օրինակներ՝ «Աղթարք»՝ (Վենետիկ, 1513), «Աստուածաշունչ» (Ամստերդամ, 1666–1668), Ագաթանգեղոս, «Պատմութիւն Հայոց» (Կ.Պոլիս, 1709–1710), Գրիգոր Նարեկացի, «Գիրք աղօթից (Մատեան ողբերգութեան)» (Կ . Պոլիս, 1701–1702 և այլն, թարգմանական և կրոնական գրականություն, բառարաններ և այլն:

Գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերի ինտենսիվ համալրմանը զուգահեռ, թանգարանում ակտիվորեն իրականացվում է այդ նյութերի գիտական մշակման, հրատարակչական և հանրահռչակման աշխատանքները: Թանգարանը հրատարակել է հինգ տասնյակից ավելի գրքեր, ժողովածուներ՝ հիմնակում հանրությանը ներկայացնելով իր ֆոնդերում պահվող անտիպ ժառանգությունը:

2002 թ. թանգարանում բացվեց «Սայաթ-Նովայից Չարենց» մշտական ցուցադրությունը, որը 2014 թ. վերաբացվեց՝ «Մշակութային ճեմուղի» խորագրով: Հինգ ցուցասրահներում ներկայացված են 18-րդ դարից մինչև նորագույն շրջանի հայ գրականության, թատերարվեստի, երաժշտարվեստի և կինոարվեստի երախտավորները, գիտակրթական, մշակութային հաստատությունները, երաժշտական և թատերական խմբերն ու համույթները:

Թանգարանը յուրաքանչյուր տարի ժամանակավոր ցուցադրությունների, բազմաժանր միջոցառումների, ինտերակտիվ կրթական ծրագրերի միջոցով հանրությանն է ներկայացնում իր հարուստ շտեմարանից ուշագրավ պատառիկներ:

Գրականության և արվեստի թանգարանի համար մեծ արժեք է ներկայացնում նկարիչ, հողանկարչության հիմնադիր Մարկոս Գրիգորյանի հավաքածուն, որը դեռևս 1993 թվականին հեղինակը նվիրաբերեց Հայաստանին: Հավաքածուն իր հանգրվանը գտավ թանգարանում, որի հիման վրա բացվեց «Միջին Արևելքի արվեստ» ցուցադրությունը: Այն ընդգրկում է շուրջ 2500 բնօրինակ նմուշ՝ ինչպես նկարիչ Մարկոս Գրիգորյանի աշխատանքները, այնպես էլ անվանի արվեստագետի անձնական հավաքածուն՝ հայկական, իրանական, եվրոպական և ամերիկյան մշակույթի տարբեր նմուշներ՝ հնագիտական իրեր, գեղանկարչական աշխատանքներ, զարդարվեստի նմուշներ, գորգեր և այլն:

Վերջին տասնամյակներին թանգարանի գործունեությունն առավել ընդլայնվեց նաև հայ դասական գրողներ Հովհաննես Թումանյանի (Դսեղ), Դերենիկ Դեմիրճյանի (Երևան), Ակսել Բակունցի (Գորիս), Պերճ Պռոշյանի (Աշտարակ), Սիլվա Կապուտիկյանի (Երևան) տուն-թանգարանների ստեղծումով, ինչպես նաև մեծանուն լեզվաբան Գրիգոր Ղափանցյանի թանգարանի (Աշտարակ)՝ Գրականության և արվեստի թանգարանի կազմում որպես մասնաճյուղերի ընդգրկմամբ:

Ամփոփելով ավելի քան մեկդարյա թանգարանի գործունեությունը՝ կարող

ենք արձանագրել, որ այստեղ է խտացել հայ ժողովրդի գրականության և արվեստի շուրջ երեքահարյուրամյա պատմությունը և այն շարունակում է համալրվել ու հարստանալ նոր արժեքներով:

Օգտագործված գրականություն

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2010– Հովհաննիսյան Հ ., Հայ թատրոնի պատմություն . 19-րդ դար, Երևան, 2010

ՈՒՂԵՑՈՒՅՑ 2009 – Ուղեցույց Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Երևան, 2009:

ՈՒՂԵՑՈՒՅՑ 1962 – Ուղեցույց Գրականության և արվեստի թանգարանի գրական ֆոնդերի, Երևան, 1962:

ՈՒՂԵՑՈՒՅՑ 2006 – Ուղեցույց Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի երաժշտական ֆոնդերի, Երևան, 2016:

ՈՒՂԵՑՈՒՅՑ 2018 – Ուղեցույց, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի կինոֆոնդերի, Երևան, 2018:

Արուսյակ Ղազարյան
Հայաստանի պատմության թանգարան